

ԽԱԼԻՖԱ ԻՐՆ ԽԱՅՅԱԹԸ ՈՐՊԵՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ
ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅԱՆ Է—Թ ԴԴ. ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՂԱՅՈՒՐ

Մոտ երկու տասնամյակ առաջ արաբագիտությանը հայտնի դարձավ մի նոր պատմական երկ՝ Խալիֆա իրն Խայյաթի Պատմությունը¹, որի ուսումնասիրությունից պարզվեց, որ այդ արաբ պատմագրությունից մեզ հասած հնագույն աշխատությունն է։ Նորահայտ պատմական երկի մասին դեռ չկան մասնագիտական ուսումնասիրություններ, բացի բնագրի հրատարակության առաջաբանից։ Խալիֆա իրն Խայյաթը նոր, թարմ նյութ է մատուցում Խալիֆայության տարբեր նահանգների, ընդ որում և Հայաստանի քաղաքական կյանքի մասին։

Որպես պատմական երկ այն առնչվում է արաբ պատմագրության կազմավորման շրջանին։

Արաբ պատմագրությունը² կազմավորվել է յուրահատուկ պայմաններում։ Խալիֆայության նվաճումներից որոշ ժամանակ հետո սկսել են գրի առնել մոտիկ անցյալի դեպքերը։ Մեզ հասել են մատենագրական տեղեկություններ, որ արդեն Ը դարի սկզբից գրի են առնվել է դարի իրադարձությունները, ինչպես նաև նախիսլամական (հեթանոսական) շրջանի ավանդությունները, ցեղային տոհմաբանությունները (անսաբ) և այլն³։

Նախիսլամական շրջանի եմենի պատմությունը գրի է առել Ուահբ իրն Մունաբբիհը⁴ (մեռ. 728/734) իր Քիտաբ ալ-տիջան (Թագերի մատյան) Երկի մեջ, որը մեզ հասել է Աբդ ալ-Մալիք իրն Հիշամի⁵ (մեռ. 833) խմբագրությամբ, իսկ հեթանոսական Արաբիայի ավանդությունները և հետագա դեպքերի շարադրանքը տվել է Հիշամ իրն Մուհամմադ ալ-Քալբին⁶ (մեռ. 819)։ Շարադրել են նաև Մուհամմադի վարքը (սիրա), լայնորեն օգտագործելով նրա մասին ավանդությունները (հադիս) և կրոնական առաջին արշավանքների (մադազի) նյութերը։ Հայտնի է Մուհամմադ իրն Իսհակի⁷ (մեռ. 768) մեզ չհասած

աշխատութիւնը, որից առատորեն օգտվել է վերոհիշյալ Աբդ ալ-Մալիք իրն Հիշամը:

Այս ամենը հիմք դարձավ խալիֆայութեան նվաճումների և պատմութեան շարադրման համար: Այս արար պատմագրութեան նախնական շրջանն է, որն ընդգրկում է Թ դարի առաջին կեսը: Առաջին կարևոր դեմքը, որ շարադրել է խալիֆայութեան պատմութիւնը, հասցնելով մինչև Հարուն ալ-Ռաշիդի օրերը, Մուհամմադ իրն Օմար ալ-Վալիդին⁸ (մեռ. 823) է, որի երկերը հիմնականում կորել են և միայն մի փոքր մասն է պահպանվել՝ կրոնական առաջին արշավանքների (մաղազի) մասին⁹, իսկ մյուս աշխատութիւնները (Եգիպտոսի, Սիրիայի և Միջագետքի նվաճումները)¹⁰ նրա անվամբ վերաշարադրվել են ԺԲ դարում և կոչվում են կեղծ-Վալիդիի երկեր: Վալիդիի գործերը Թ դարում լայնորեն օգտագործել են պատմիչները և հաճախ վկայակոչել նրան:

Նրան ժամանակակից է Աբու Ուբայդան¹¹ (մեռ. 824), որը թեև հայտնի է որպես նախնական ավանդութիւնների հետազոտող, սակայն գրել է նաև խալիֆայութեան պատմութեան մասին: Վերջապես, արար պատմագրութեան այս ժամանակաշրջանի ներկայացուցիչ է Մադաինին¹² (մեռ. 830/849): Այս երկու պատմիչների երկերը չեն պահպանվել, սակայն ժամանակին օգտագործվել են Թ դարի պատմիչների կողմից:

Ահա այս վիճակում էր արաբական պատմագրութիւնը, երբ հանդես եկավ հալիֆա իրն հայյաթը:

Հալիֆա իրն հայյաթ ալ-Ուսֆուրին միջնադարյան արար մատենագրութեան մեջ հայտնի է եղել որպես «Կենսագրութիւնների դասակարգում» (Թարակատ) կոչվող աշխատութեան հեղինակ: Նրան հիշատակում են Թարարին¹³ (Ժ դ.), Իբն ալ-Նադիմը¹⁴ (Ժ դ.), Իբն ալ-Ասիրը¹⁵ (ԺԳ դ.), Իբն հալլիբանը¹⁶ (ԺԳ դ.), Իբն Քասիրը¹⁷ (ԺԴ դ.), Իբն Տաղրի Բիրդին¹⁸ (ԺԵ դ.): Իբն ալ-Նադիմը Ֆիհրիստ կոչվող մատենագիտական աշխատութիւնում, այլ աշխատութիւնների շարքում, հիշատակում է նրա Պատմութիւնը, իսկ Իբն Քասիրը նրան բնորոշում է որպես պատմագրութեան կարկառուն դեմքերից մեկը: Նրա պատմական երկից օգտվել ու վկայակոչել է Իբն Տաղրի Բիրդին: Արաբ պատմագրութեան պատմութեան առաջին ուսումնասիրող Ֆ. Վյուստենֆելդը¹⁹ հիշատակում է հալիֆա իրն հայյաթին որպես պատմիչի:

Եվ ահա 1963-ին, Մարոկկոյի մի հեռավոր մենաստանում (զաուիյա), հայտնաբերվեց հալիֆա իրն հայյաթի ձեռագիրը, որը շուտով բերվեց Ռաբաթի մատենադարանը: Թվում էր, թե սա նրա «Կենսագրու-

թյունների դասակարգում» (Թաբակատ) աշխատության մի ձեռագիր օրինակն է, սակայն Բաղդադի Համալսարանի իսլամի պատմության դասախոս, բանասեր Աբրամ Դիա ալ-Օմարին²⁰ պարզեց, որ դա հալիֆա իբն ալ-հալլաթի պատմական երկն է և 1967-ին հրատարակեց Բաղդադում²¹։ Երկը, վերանայված, երկրորդ անգամ հրատարակվեց 1977-ին (Դամասկոս-Բեյրութ)։ Այս հայտնագործությունը մի բացառիկ երևույթ էր արաբագիտության մեջ, քանզի աշխատությունը ամբողջովին պահպանված հնագույն արաբական պատմական երկն է։

Հալիֆա իբն հալլաթ ալ-Ուաֆուրին²², որը հայտնի է նաև Շաբար անվամբ, ծնվել է մոտավորապես 776/777 թվականին Բասրայում (Իրաք)։ Նրա հայրը և պապը ուսումնասիրել են ավանդությունները (հադիս) Մուհամմադի մասին։ Հալիֆան ուսումնառությունն անց է կացրել Բասրայում, ուր նրա ուսուցիչներն են եղել Հիշամ ալ-Քալբին, ալ-Մադահին և ուրիշներ, իսկ նրա աշակերտներից կարելի է հիշատակել Բուխարիին (որն իր կրոնական աշխատության մեջ հիշում է նրան) և իբն Հանբալին։ Հալիֆան մահացել է հավանաբար հիշրի 240 (854) թվականին, թեև որոշ մատենագիրներ այլ թվականներ են նշում։ Ըստ որոշակի տվյալների նա ապրել է 80 տարի։

Նրա պատմական երկը մեզ է հասել եզակի ձեռագրով, որը Ռաբաթի մատենադարանում 199 թվահամարն է կրում։ Ունի 336 էջ և գրված է մաղրիբյան հստակ գրությամբ։ Որոշ տեղերում ձեռագիրը խոնավությունից տուժել է և ինչ-որ բառեր չեն կարդացվում։ Գրչագրի վերջում կա ընդօրինակողի անունը՝ Ահմադ իբն Մուհամմադ ալ-Աշաա-րի և թվականը՝ հիշրի 477 (1085 Վրկչական)։ Այս պատմական երկը մեզ հասել է Բակիյ իբն Մախլադի (817—889) խմբագրությամբ, որը հալիֆայի աշակերտն էր Իրաքում²³։

Իբն հալլաթն ունի բազմաթիվ աղբյուրներ՝ իբն Իսհակը, Մադահին, Աբու-լ-Յալզանը (մեռ. 805/806) և Աբու Ուբայդան. վերջինս թեև համարվել է նախիսլամական ավանդությունների մասնագետ հեղինակ, սակայն գրել է նաև Պարսկաստանի, Բասրայի, Ահուազի, Խորասանի և Հայաստանի նվաճման մասին²⁴։ Նա թեև Վակիդիին չի վկայակոչում, սակայն հիշատակում է մահվան թվականը՝ 207(823)²⁵ և, անկասկած, ծանոթ է նրա աշխատությանն ու, հավանաբար, օգտագործել է նրա տեղեկությունները։ Բացի նախորդ պատմիչներից նա բազմաթիվ բանավոր տեղեկություններ է հավաքել ժամանակակից ժերու-նիներից, որոնց անունները հիշատակում է²⁶։

Նա իր պատմական նյութը շարադրելիս հիմք է ընդունել հիշրի

թվականությունը, ընդ որում ամեն մի թվական մի վերնագիր է, իսկ այդ վերնագրի տակ՝ ենթավերնագրեր խալիֆաների անուններով կամ դեպքերով: Բանն այն է, որ հաջորդող՝ Թ դարի բոլոր պատմիչները (Իբն Կուտայբա, Դինավարի, Բալազուրի, Յակուբի) թեև օգտագործում են հիշրի թվականությունը, սակայն իրենց աշխատությունների վերնագրերը հիշրի թվականությամբ չեն կազմում, այլ խալիֆաների անուններով, կամ դեպքերի հիշատակումով: Խալիֆա իբն Խայյաթի երկի հայտնաբերումով առավել ևս պարզ դարձավ որ հենց սկզբից արար պատմագրությունը օգտագործել է թվականությունը (հիշրի) որպես շարադրանքի հիմք, և Թաբարին (մեռ. 923) առաջինը չէ, որ հիշրի թվականները վերնագրեր է դարձրել²⁷:

Խալիֆա իբն Խայյաթի Պատմությունն սկսվում է տարբեր թվականությունների հիշատակմամբ (տարիս): Մարդիկ սկզբում թվականությունն սկսել են Ադամի՝ դրախտից վտարվելուց: Թվականություն ունեն նաև պարսիկները և Իսրայելի որդիք: Ինչ վերաբերում է մահմեդական թվականությանը, ապա ոմանք գտել են, որ պետք է թվագրել Մուհամմադի ծննդյան տարուց, կամ մահվան օրվանից, կամ նրա քարոզի ներշնչում ստացած ժամանակից և ի վերջո հանգել են այն եզրակացության, որ պետք է թվագրել նրա՝ Մեքքայից Մադինա գաղթի²⁸, այսինքն՝ 622 (հիշրա) թվականից:

Պատմիչը մանրամասն շարադրում է Մուհամմադի ճակատամարտերը իր թշնամի մեքքացիների դեմ, նշում, որ նա պայմանագրեր կնքելու նպատակով պատվիրակություններ է ուղարկել Եգիպտոսի ղպտի պատրիարքի (Մուկաուկիս), պարսից Սասանյան արքայի (Քիսրա) և հռոմեաների կայսրի (կայսար) մոտ²⁹:

Խալիֆան կարևոր աղբյուր է արաբական խալիֆայության նվաճողական արշավանքների պատմության: Նա այսպես է նկարագրում Յարմուքի վճռական ճակատամարտը. «Ռումի զորքերը Յարմուքում հանդես եկան հարյուր հազար հռոմեաներով և Կուդաա ցեղի արաբներով: Նրանց հրամանատարն էր սակելլարիոսը, որը Հերակլի ներքինիներից էր»: Մի ուրիշ աղբյուր վկայակոչելով գրում է. «Հռոմեաները երեք հարյուր հազար էին և նրանց հրամանատարն էր Վահանը (Բահան), որը պարսից որդիներից էր և քրիստոնեություն ընդունելով միացել է հռոմեաներին...: Եվ սաստիկ պատերազմից հետո ալլահը բազմաստվածյաններին պարտության մատնեց ու նրանց մեծ կոտորած տվեց: Ճակատամարտը տեղի ունեցավ երկուշաբթի օրը տասնհինգ թվականի ռաջաբ ամսից հինգ օր անցած (13 օգոստոս 636)»³⁰:

Զարմանալի չպետք է թվա, որ մի դեպքում բյուզանդական զորքի հրամանատար հիշվում է Թեոդորոս սակեղարիոսը, մյուս դեպքում՝ հայազգի Վահան ստրատելատը։ Այդ մասին Թեոփանեսն ավելի հստակ է։ Նա վկայում է, որ Հերակլիոս կայսրը տեսնելով իր եղբոր՝ Թեոդորոսի պարտությունը արաբներից «զորավար նշանակեց մի ուրիշի՝ Վահանին»։ Երբ արաբները հարձակվեցին «Վահանը իմանալով այդ մասին, դիմեց կայսերական սակեղարիոսին, որպեսզի շտապի իրեն օգնություն։ Սակեղարիոսը եկավ Վահանի մոտ»։ Սակեղարիոսի զորքը պարտություն է կրում և «Վահանի զորքերն ապստամբություն բարձրացնելով, Վահանին կայսր են հռչակում»։ Ինչպես հայտնի է, բյուզանդացիք պարտվեցին։ Թեոփանեսն ավելացնում է. «Երկու զորավարների գլխավորած զորքը 40 հազար հոգի էին»³¹։

Արաբ պատմիչներից Բալազուրին³² Յարմուքի ճակատամարտի մասին գրում է. «Ասում են, որ Հերակլը անթիվ զորք հավաքեց, բաղկացած հոռոմներից, Ասորիքի (Շամ), Ջաղիրայի ու Հայաստանի ժողովրդից։ Նրանց թիվը մոտավորապես երկու հարյուր հազար էր. նա հրամանատար նշանակեց իր մերձավորներից մեկին»։ Յակուբին (Թ. դ.) ավելի պարզ է գրում. «Ապա նա (Աբու Ուբայդան) լսեց, որ հոռոմների բռնապետը բոլոր երկրներից զորքեր է հավաքել և իրենց դեմ է ուղարկել անթիվ բազմությունը։ ...Իսկ Աբու Ուբայդան իր զորքի առաջապահ դարձրեց իսլիդ իբն ալ-Վալիդին, որը բազմաստվածյանների հետ կռվի բռնվեց, բախվեց հոռոմների տեր (հրամանատար) Վահանին (Մահան) և սաստիկ գոտեմարտ տեղի ունեցավ»³³։ Թաբարին (Ժ. դ.) ևս հիշում է Վահանին³⁴ (Բահան) որպես երկու հրամանատարներից մեկը և ապա վկայում, որ. «(Հերակլը) ուղարկեց սակեղարիոսին, իր ներքինիներից մեկին, որը շարժվեց հարյուր հազար ռազմիկներով, որոնց մեջ կային տասներկու հազար Հայաստանի ժողովրդից, Ջաղայի գլխավորությամբ»³⁵։

Հետաքրքրական է, որ Տիզբոնի նվաճման առթիվ իսլիֆա իբն իսայաթը, արաբ լինելով հանդերձ, նշում է արաբների խիստ ցածր մակարդակի փաստեր, որոնց մասին ընդհանրապես նշում են պարսկական (օտար) ծագում ունեցող պատմիչները, ինչպես Դինավարին ու Բալազուրին։ Սրանց մոտ նկատվում են շուտեփյայի (նվաճված մահմեդական ժողովուրդների կողմից արաբներին ցածր ցույց տալու)³⁶ տրամադրությունները։ Այսպես, իսլիֆան պատմում էր, որ կողոպուտով զբաղված արաբները քամֆորան (քաֆուր) մսի վրա էին ցանում և ասում՝ ինչ դառն է պարսիկների աղը։ Նրանք դեղինը փոխում էին սպի-

տակի հետ, այսինքն ոսկին՝ արծաթով, չիմանալով ոսկու արժեքը³⁷: Այս նույնը պատմում է նաև Դինավարին³⁸ : Իսկ Բալազուրին³⁹ նշում է, որ մի արաբ գերի ընկած ազնվական կնոջը վաճառել էր հազար դիրհեմով (արծաթ) և երբ հարցնում են, թե ինչու ավելին չպահանջեցիր ասում է՝ երբեք չէի մտածել, թե հազարից ավելի թիվ կա:

Եգիպտոսի նվաճմանն առնչվող դեպքերի շարադրման ժամանակ խալիֆան հիշում է հիջրի 25-ի (645—646) Ալեքսանդրիայի ապստամբությունը: «Այդ տարում Ռումի թագավորը ներքինի Մանուելին նալեբով ուղարկեց Ալեքսանդրիա»⁴⁰: Բալազուրին գրում է. «Նա իր մերձավորներից մի մարդու ուղարկեց, որը կոչվում էր Մանուել՝ երեք հարյուր նավերով»⁴¹: Թեոփանեսը մի քիչ այլ ձևով է նկարագրում. «Հիշելով, որ Եգիպտոսի (Ալեքսանդրիայի) պատրիարք Կյուրոսը հպատակություն է հայտնել արաբներին, կայսրը ետ կանչեց նրան և ավգուստալիոս նշանակեց հայազգի ոմն Մանուելի»⁴²:

Մեր պատմիչը հատուկ ուշադրություն է նվիրում Օմայան ժամանակաշրջանի պատմությանը: Արաբական խալիֆայության պատմության համար խիստ կարևոր են նրա տեղեկությունները պետական կարգի վերաբերյալ, ընդ որում, յուրաքանչյուր խալիֆայի մասին պատմիչուց հետո վերջում, հատուկ գլխի տակ, հիշում է արքունի բարձրաստիճան պաշտոնյաներին: Բանն այն է, որ արաբ պատմիչները ընդհանրապես հակիրճ տեղեկություններ են հաղորդում պետական կարգի մասին, մինչդեռ խալիֆայի տվյալներից պարզվում է, որ դեռևս Օմայան խալիֆայության հիմնադիր Մուավիայի (661—680) օրոք արդեն որոշ զարգացած պետական կարգ է գոյություն ունեցել⁴³: Նա նշում է նամակների քարտուղար (քատիբ ալ-ռասայիլ), ինչպես նաև կնիքի դիվան (դիվան-ալ-խատամ), որի պետը պաշտոնական գրությունների վերահսկիչն էր: Դիվանի և բոլոր գործերի վերակացուն էր Սարջուն իբն Մանսուր ալ-Ռումիին⁴⁴ (հռոմ՝ այսինքն քրիստոնյա), որը հիշվում է նաև Աբդ ալ-Մալիքի (685—705) օրոք որպես քարտուղար (քատիբ)⁴⁵, իսկ Վալիդի (705—715) իշխանության տարիներին՝ հարկային դիվանի (դիվան ալ-խարաջ) պետ⁴⁶: Սա որդին էր Մանսուր իբն Սարջունի (Սերգիոս), որն արաբական նվաճման նախօրեին, բյուզանդացիների օրոք, Դամասկոսի հարկային տեսուչն էր⁴⁷: Սարջուն իբն Մանսուրի որդին էր քրիստոնյա նշանավոր մատենագիր Հովհան Դամասկեցին (675—749/753), որը նույնպես երիտասարդ ժամանակ ծառայել էր Օմայանների արքունիքում որպես հարկային տեսուչ⁴⁸: Ապա հիշվում է սենեկապետը (հաջիբ), առաջապահ զորքի (շուրթա) հրամանատարը,

արքունի պահակազորքի (հարաս) հրամանատարը։ Այս ցուցակը, մի քիչ այլ ձևով, կա նաև Թաբարու⁴⁹ մոտ, որը, հավանաբար, հալիֆա իբն հալլաթից է օգտվել։

հալիֆա իբն հալլաթը խիստ շահեկան տեղեկություններ է տալիս արաբական խալիֆայության դեմ 703 թվականի հայերի ապստամբություն⁵⁰ և հարակից դեպքերի մասին, որոնց համեմատությունը արաբ և հայ պատմիչների զուգահեռ տվյալների հետ շատ հետաքրքրական է։ Հստ նրա, 82 հիշրի (15 փետրվար 701—3 փետրվար 702) թվականին «Աբդ ալ-Մալիք (խալիֆան) իր եղբորը՝ Մուհամմադին ուղարկեց Հայաստան և այնտեղ բնակիչները կռիվեցին, իսկ նա հաղթեց նրանց։ Ապա նրանք հաշտություն խնդրեցին և նա հաշտության պայմանագիր կնքեց ու նրանց կառավարիչ նշանակեց Նաբիհ իբն Աբդալլահ ալ-Անազիրին։ Նրանք դավաճանեցին ու սպանեցին նրան»⁵¹։ Խոսքը Հյուսիսի փոխարքա Մուհամմադ իբն Մարուանի՝ 701 թվականի Հայաստան կատարած մեծ արշավանքի և հայերի 703-ի ապստամբության մասին է, միայն թե ապստամբությունը, ինչպես բոլոր արաբ պատմիչների մոտ, դրվում է արշավանքից առաջ։ Իսկ նշված կառավարչի անունը հայտնի չէ ոչ մեկ այլ պատմիչի մոտ։ Նույն տարվա մասին իբն ալ-Ասիրը գրում է. «Մուհամմադ իբն Մարուանը արշավեց Հայաստան, հաղթեց, և (հայերը) հաշտություն խնդրեցին և նա հաշտություն կնքեց ու կառավարիչ նշանակեց Աբու Շայխ իբն Աբդալլահին, սակայն նրանք դավաճանեցին ու սպանեցին նրան։ Ասվում է, որ նրան սպանեցին ութսուններեք թվականին»⁵²։ Խալիֆա իբն հալլաթը հենց 83 (4 փետրվար 702—23 հունվար 703) թվականի տակ գրում է. «Աբդ ալ-Մալիք իբն Մարուանը իր եղբորը Մուհամմադին ուղարկեց Հայաստան և նրանք (հայերը) հաշտության պայմանագիր կնքեցին։ Նա նրանց վրա կառավարիչ նշանակեց Աբու Շայխ իբն Աբդալլահ ալ-Ղանավիին և Ամրու իբն ալ-Սադա ալ-Ղանավիին, սակայն երկուսին էլ դավաճանեցին ու սպանեցին»⁵³։ Այստեղ խալիֆա իբն հալլաթը և իբն ալ-Ասիրը համաձայն են, որ այդ տարիներին (կամ տարում) նշանակվել է Աբու Շայխ իբն Աբդալլահը և սպանվել։ Իսկ նրանից հետո հիշված անունը չկա այլ պատմիչների մոտ։

Ղևոնդ պատմիչը, խոսելով Մուհամմադ իբն Մարուանի 701-ի արշավանքի ու վերադարձի մասին, նշում է միայն, որ նա մեկին որպես կառավարիչ թողեց իր տեղում⁵⁴։ Նույն դեպքի մասին Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցին վկայում է, որ Մուհամմադը կառավարիչ թողեց Աբդալլային⁵⁵։ Դրասխանակերտցու վկայությունը հաստատում

է ժամանակակից արաբ պատմիչ ալ-Քուֆին (մեռ. 926), որն առանց թվական նշելու գրում է, որ Աբդ ալ-Մալիք խալիֆան իր եղբորը Ջադիրայի, Հայաստանի (Արմինիա) և Ատրպատականի կառավարիչ նշանակեց ու հզոր բանակ տվեց: «Եվ Մուհամմադ իբն Մարուանը այս բանակով Ասորիքից դուրս եկավ, իր հետ ունենալով Մասլամա իբն Աբդ ալ-Մալիք իբն Մարուանին և հասավ Ջազիրա երկիրը: Դրանից հետո իր մոտ կանչեց իր ընկերակիցներից մեկին, որը կոչվում էր Աբդալլահ (Ուբայդալլահ) իբն Աբու Շայխ ալ-Աուֆյ, հանձնեց նրան տաս հազար ռազմիկներ Ասորիքի բնակիչներից և հրամայեց հարձակվել Հայաստանի վրա, պատերազմելու այնտեղ գտնվող խազարների և այլ անհավատների դեմ: Աբդալլահ իբն Աբու Շայխն իր զորքով մեկնեց ու հասավ Հայաստան: Այդ մասին իմացավ երկրի ժողովուրդը և մահմեդականների դեմ դուրս բերեց հսկայական բազմություն՝ հարյուր հազարից ավելի մարդկանց: Նրանք մահմեդականներին կոտորեցին, ոչ մեկին ողջ չթողնելով»⁵⁶: Հայերի տված այս ջարդը, հավանաբար, արձագանքն է հետագայում՝ 703-ին Վարդանակերտի ճակատամարտում հայերի տարած հաղթանակի, ուր հայերը գրեթե բոլոր արաբներին կոտորեցին⁵⁷:

Այսպիսով, Հովհաննես Դրասխանակերտցին Մուհամմադի թողած ոստիկան է հիշում Աբդալլային, որը կրկնելով Քուֆին՝ նրան կոչում է Աբդալլահ իբն Աբու Շայխ, իսկ խալիֆա իբն իսլամը այդ ոստիկանին անվանում է Աբու Շայխ իբն Աբդալլահ ալ-Ղանաուֆ, որը կրկնում է իբն ալ-Ասիրը: Մնում է եղրակացնել, որ զուցե խոսքը վերաբերում է երկու տարբեր անձնավորությունների՝ մեկը Աբդալլահ իբն Աբու Շայխ, իսկ մյուսը՝ Աբու Շայխ իբն Աբդալլահ⁵⁸:

Բացի խալիֆա իբն իսլամից, Քուֆիից և իբն ալ-Ասիրից Թ դարի արաբ պատմիչներ Բալազուրին⁵⁹ և Յակուբին⁶⁰ ևս վկայում են, որ Հայաստանը ապստամբ վիճակում էր և Մուհամմադ իբն Մարուանը եկավ, ճնշեց ու նվաճեց: Նրանք ապստամբությունը (որը տեղի ունեցավ 703-ին) ավելի շուտ են նշում, քան Մուհամմադի 701 թվականի ավերիչ արշավանքը, որով Հայաստանը վերջնականապես նվաճվեց արաբական խալիֆայության կողմից: Արաբ պատմիչներին հայտնի չէ, որ 703-ի հայերի ապստամբությունից հետո Հայաստանը չճնշվեց խալիֆայության կողմից, որովհետև Սահակ Չորրորդիցի կաթողիկոսի խնդրանքով արաբական իշխանությունները ժամանակավորապես հրաժարվեցին վրիժառու լինելուց:

Սակայն ապստամբությունից հետո, ըստ Դևտնդի, Մուհամմադը

է ժամանակակից արաբ պատմիչ ալ-Քուֆին (մեռ. 926), որն առանց թվական նշելու գրում է, որ Աբդ ալ-Մալիք խալիֆան իր եղբորը Ջադիրայի, Հայաստանի (Արմինիա) և Ատրպատականի կառավարիչ նշանակեց ու հզոր բանակ տվեց: «Եվ Մուհամմադ իբն Մարուանը այս բանակով Ասորիքից դուրս եկավ, իր հետ ունենալով Մասլամա իբն Աբդ ալ-Մալիք իբն Մարուանին և հասավ Ջազիրա երկիրը: Դրանից հետո իր մոտ կանչեց իր ընկերակիցներից մեկին, որը կոչվում էր Աբդալլահ (Ուբայդալլահ) իբն Աբու Շայխ ալ-Աուֆյ, հանձնեց նրան տաս հազար ռազմիկներ Ասորիքի բնակիչներից և հրամայեց հարձակվել Հայաստանի վրա, պատերազմելու այնտեղ գտնվող խազարների և այլ անհավատների դեմ: Աբդալլահ իբն Աբու Շայխն իր զորքով մեկնեց ու հասավ Հայաստան: Այդ մասին իմացավ երկրի ժողովուրդը և մահմեդականների դեմ դուրս բերեց հսկայական բազմություն՝ հարյուր հազարից ավելի մարդկանց: Նրանք մահմեդականներին կոտորեցին, ոչ մեկին ողջ չթողնելով»⁵⁶: Հայերի տված այս ջարդը, հավանաբար, արձագանքն է հետագայում՝ 703-ին Վարդանակերտի ճակատամարտում հայերի տարած հաղթանակի, ուր հայերը գրեթե բոլոր արաբներին կոտորեցին⁵⁷:

Այսպիսով, Հովհաննես Դրասխանակերտցին Մուհամմադի թողած ոստիկան է հիշում Աբդալլային, որը կրկնելով Քուֆին՝ նրան կոչում է Աբդալլահ իբն Աբու Շայխ, իսկ խալիֆա իբն իսլամը այդ ոստիկանին անվանում է Աբու Շայխ իբն Աբդալլահ ալ-Ղանաուֆ, որը կրկնում է իբն ալ-Ասիրը: Մնում է եղրակացնել, որ գուցե խոսքը վերաբերում է երկու տարբեր անձնավորությունների՝ մեկը Աբդալլահ իբն Աբու Շայխ, իսկ մյուսը՝ Աբու Շայխ իբն Աբդալլահ⁵⁸:

Բացի խալիֆա իբն իսլամից, Քուֆիից և իբն ալ-Ասիրից Թ դարի արաբ պատմիչներ Բալազուրին⁵⁹ և Յակուբին⁶⁰ ևս վկայում են, որ Հայաստանը ապստամբ վիճակում էր և Մուհամմադ իբն Մարուանը եկավ, ճնշեց ու նվաճեց: Նրանք ապստամբությունը (որը տեղի ունեցավ 703-ին) ավելի շուտ են նշում, քան Մուհամմադի 701 թվականի ավերիչ արշավանքը, որով Հայաստանը վերջնականապես նվաճվեց արաբական խալիֆայության կողմից: Արաբ պատմիչներին հայտնի չէ, որ 703-ի հայերի ապստամբությունից հետո Հայաստանը չճնշվեց խալիֆայության կողմից, որովհետև Սահակ Չորրորդիցի կաթողիկոսի խնդրանքով արաբական իշխանությունները ժամանակավորապես հրաժարվեցին վրիժառու լինելուց:

Սակայն ապստամբությունից հետո, ըստ Դևոնդի, Մուհամմադը

նորից զորքով եկավ Հայաստան և գաղտնի հետևում էր Հայաստանի նախարարներին⁶¹։ Գուցե սրան է վերաբերում հալիֆա իբն հայյաթի⁶² և իբն ալ-Ասիրի⁶³ այն վկայությունը, թե 85 հիշրի (14 հունվար 704—1 հունվար 705) թվականին Մուհամմադ իբն Մարուանը արշավեց Հայաստան և այնտեղ անցկացրեց ամառն ու ձմեռը։ Այստեղ, թյուրիմացությամբ, արաբ պատմիչները մեկ տարով հետ են բերել դեպքերը, քանի որ այդ կարող էր տեղի ունենալ միայն 703-ին։

Շարունակելով դեպքերի շարադրանքը, հալիֆան 84 հիշրի (24 հունվար 703—13 հունվար 704) թվականի տակ ավելացնում է, որ. «հոռոմները հարձակվեցին Հայաստանի վրա Մուհամմադ իբն Մարուանի դեմ և ալլահը նրանց պարտության մատնեց»⁶⁴։ Այս, ակներևորեն, Հայաստանից հեռացած Հայոց իշխան Սմբատ Բագրատունու 705-ին կատարած հարձակմանն է վերաբերում։ Այդ թվականի աշնանը Սմբատ Բագրատունին, իր գահին վերահաստատված Հուստինիանոս Բ-ից օգնական բյուզանդական զորք ստանալով, Տաջի կողմերից հարձակվեց արաբական տիրապետության տակ գտնվող Վանանդ գավառի վրա, սակայն Դրաշպետ գյուղի մոտ պարտություն կրեց⁶⁵։

Քուֆին այսպես է նկարագրում Դրաշպետի ճակատամարտը. Մուհամմադը, լսելով Հայաստան ուղարկած իր զորքի պարտությունը, 40 հազարանոց զորքով դիմեց Հայաստան։ Երբ Հայաստանի միջին մասերը հասավ, նրա դեմ դուրս եկավ հոռոմների և հայերի մեծ բազմություն։ Մուհամմադ իբն Մարուանը կատաղի պատերազմ մղեց և վախենում էր խայտառակությունից ու պարտությունից, քանզի անհավատները մեծ բազմությամբ էին հավաքվել։ Սակայն բարձրյալն ալլահը հեթանոսներին (բազմաստվածյաններին) փախուստի մատնեց և մահմեդականներին ուժեղացրեց իր հովանավորությամբ»⁶⁶։

Այս դեպքերի հիշատակումից հետո հալիֆան 84 (703—704) թվականի տակ «ալլահը նրանց պարտության մատնեց» արտահայտությունից հետո անմիջապես շարունակում է. «Եվ դա կրակի (հրդեհի) տարին է (սանատ ալ-հարիկ)։ Բանն այն է, որ Մուհամմադը (բյուզանդական) զորքի պարտությունից հետո (հայերի դեմ) ուղարկեց Օսման իբն Աֆֆանի մաուլա Զիյադ իբն ալ-Ջառահին և Հուբայրա իբն ալ-Արաջ ալ-Հադրամիին և նրանց վառեցին իրենց եկեղեցիներում, տաճարներում և գյուղերում։ Հրկիզումը կատարվեց Նախճավանում և Վասպուրականում»⁶⁷։

Արաբները թեև 703-ի ապստամբության վրեժը Սահակ կաթողիկոսի խնդրանքով չէին լուծել, սակայն Սմբատ Բագրատունու այս հար-

ձակումից հետո նրանք առիթը բաց շթողեցին և հարյուրավոր հայ նախարարների կանչելով Դավին ողջ-ողջ այրեցին Նախճավանի ու Խրամի եկեղեցիներում⁶⁸։

Այս արյունալի դեպքերը հիշատակում են նաև արաբ պատմիչներ Բալադուրին⁶⁹, Յակուբին⁷⁰, Իբն ալ-Քասիրը⁷¹ և Իբն Տաղրիբիբիդին⁷², իսկ Քուֆին վկայում է, որ այդ վառված եկեղեցիները կան և մինչև օրս կոչվում են մուհտարիկա (վառվածներ)⁷³։

Խալիֆա իբն Խալլաթը կարևոր աղբյուր է նաև արաբ-խազարական երկարատև պատերազմների հետադոտման համար։ Հետաքրքրական է Հյուսիսի (Արմինիա, Ատրպատական, Զաղիրա) փոխարքա Մարուան իբն Մուհամմադի (հետագայում խալիֆա Մարուան Բ, 744—750) արշավանքի նկարագրությունը Կովկասի լեռնային շրջաններում։ Այս մասին մամասն տեղեկություններ կան Խալիֆա իբն Խալլաթի⁷⁴, Բալադուրի⁷⁵, Իբն ալ-Ասիրի⁷⁶ և մասամբ Աբու-լ-Մահասին իբն Տաղրիբիբիդի⁷⁷ գործերում։ Խազարների դեմ մղած երկարատև պատերազմների մասին, որը վճռական նշանակություն ունեցավ խալիֆայության կյանքում, Յակուբին⁷⁶ ու Թաբարին⁷⁹ զարմանալիորեն մի քանի խոսքով են արտահայտվում։ Մարուանը 737-ին ջախջախելով խազարների խաբանին արշավեց դեպի Կովկաս՝ լեռնային իշխանությունները նվաճելու⁸⁰։ 118 հիշրի (20 հունվար 736—7 հունվար 737) թվականի տակ խալիֆան գրում է.

«Այս տարում Մարուան իբն Մուհամմադը արշավանք կատարեց Հայաստան ու մտավ Վրթանեսի (Ուարտանիս), հողը երեք դռներից և Վրթանեսը փախավ խազարների մոտ, թողնելով ամրոցը։ Մարուանը նրա առջև քարանետ մեքենաներ դրեց։ Համգիհի (Խումրին) բնակիչները սպանեցին Վրթանեսին ու նրա գլուխը ուղարկեցին Մարուանին։ Մարուանը Վրթանեսի գլուխը ցուցադրեց ամրոցի բնակիչներին և նրանք իջան, հանձնվեցին Մարուանին, որը կոտորեց ռազմիկներին ու գերեվարեց նրանց ընտանիքները»⁸¹։

Այս Ուարտանիս (Վրթանես) կոչված անձնավորությունը հիշված է Իբն ալ-Ասիրի մոտ Վարնիս (Ուարնիս)⁸² ձևով։ Սակայն նույն դեպքերի մասին պատմելիս Իբն Տաղրիբիբիդին նույնպես Ուարտանիս ձևն է օգտագործում⁸³։ Ենթադրել են, որ այս Ուարտանիսը հայկական Վրթանեսն է⁸⁴։ Սա բացառված չէ, քանի որ Լաբզի (որի տերն էր Ուարտանիսը) և ընդհանրապես Դարբանդի կողմերում հայ տարրի առկայությունը հայտնի փաստ է և դարձել է հատուկ ուսումնասիրման առարկա⁸⁵։

խալիֆա իբն խալլաթը իր աշխատանքում ուշադրութեան առարկա է դարձրել Աբբասյան ժամանակաշրջանի արաբա-բյուզանդական պատերազմները և խոռովթյունները խալիֆայութեան ներսում: 134 հիշրի (30 հուլիս 751—17 հուլիս 752) թվականին հիշում է բյուզանդական զորքի հրամանատար հայազգի Քուշան պատրիկին: Բյուզանդական ուժերը արաբների հետ բախվում են Չորրորդ Հայքում (Չորրորդ Արմինիա) և հաղթում⁸⁶: Քուշանը (Քուսան, Գուսան), ըստ Դիոնիսիոս Տելլ Մահրացու⁸⁷, եղել է Չորրորդ Հայքի հայ իշխաններից և անցել է Բյուզանդիայի կողմը: Այս արշավանքը, ըստ երևույթին, մաս էր կազմում կամ նախորդել էր Բյուզանդիայի կայսր Կոստանդին Ե Կոպրոնիմոսի արշավանքին, որի հրամանատարն էր Քուշանը, երբ բյուզանդացիք գրավեցին Մալաթիան (Մելիտինե) և Կարնո քաղաքը (Թեոդոսիոպոլիս)⁸⁸:

Մեր պատմիչը ընդհանրապես կարևոր տեղեկություններ է հաղորդում արաբա-բյուզանդական պատերազմների մասին և կարելի է ասել, որ նրա մոտ կան այնպիսի տվյալներ, որոնք չկան իր հաջորդներ Յակոբիի ու Թաբարիի մոտ: Ամեն մի խալիֆայի նվիրված հատվածի վերջում, երբ թվում է պետութեան բարձրաստիճան պաշտոնյաներին, նշում է նաև Բյուզանդիայի դեմ ամառային արշավանքներին (սաիֆա) զորավարներին:

Կարևոր տեղեկություններ է պարունակում նորահայտ պատմութունը նաև Արմինիա (Հայաստան, Վիրք, Աղվանք, Շիրվան, Դարբանդ) նահանգի արաբ կառավարիչների ցուցակի ճշտման ու լրացման համար: Նա նշում է քսանից ավելի կառավարիչների (ոստիկաններ) անուններ, որոնց մեջ կան գոյություն ունեցող ցուցակներում չհիշված անուններ⁸⁹:

Խալիֆա իբն խալլաթը համաչափորեն չի նկարագրում խալիֆայութեան պատմութեան տարբեր ժամանակաշրջանները: Այսպես, առաջին շորս խալիֆաների երեք տասնամյակ տևող պատմութեանը պատշաճ ծավալ (մոտ 100 էջ) է հատկացված, Օմայանների շուրջ 90-ամյա պատմութեանը՝ մեծագույն բաժինը (մոտ 200 էջ), իսկ Աբբասյանների հարյուրամյա շրջանին՝ Օմայաններին հատկացված ծավալի մեկ երրորդը, թեև դա նրան ժամանակակից պատմութունն է: Հանրահայտ փաստ է, որ պատմիչը իրեն մոտիկ և ժամանակակից պատմական դեպքերը շատ ավելի մանրամասն է շարադրում, քան հեռավոր ժամանակաշրջանը, որի տվյալներն այլ աղբյուրներից է քաղում: Սակայն մեր պատմիչը իր շարադրանքում հատուկ վերաբերմունք չի ցուցաբերում Օմայանների նկատմամբ:

Նորահայտ պատմական երկը միացման օղակ է մի կողմից Ը դարի և Թ դարի առաջին կեսի պատմագրության և մյուս կողմից Թ դարի երկրորդ կեսի զարգացած պատմագրության միջև: Նրա մոտ դեռ չկան օտար ազդեցություններ՝ իրանական, սուրբգրային, բյուզանդական-բրիտանական (ասորական), որ պարզ կերպով երևում է Թ դարի երկրորդ կեսի զարգացած պատմագրության ներկայացուցիչների՝ Իբն Կուտայբայի, Դինավարի, Բալազուրիի (մասամբ) և հատկապես Յակուբիի մոտ⁹⁰:

Իբն Խայյաթից օգտվել են հետագա պատմիչները, ինչպես Թաբարին, Իբն ալ-Ասիրը և Իբն Տադրիբրիդին: Նրա պատմությունը հնարավորություն է տալիս ճշգրտելու և լրացնելու Հայաստանի է—Թ դդ. և ընդհանրապես խալիֆայության պատմության շատ հարցեր:

А. ТЕР-ГЕВОНДЯН

ХАЛИФА ИБН ХАЙЙАТ КАК ИСТОЧНИК ПО ИСТОРИИ АРМЕНИИ И ХАЛИФАТА VII—IX вв.

Резюме

Обнаружение рукописи Истории Халифы ибн Хаййата в 1963 г. в Марокко стало важным событием в области арабистики. Иракский ученый А. Д. ал-Умари издал его текст в 1967 и 1976 гг., подчеркнув, что сочинение Халифы ибн Хаййата (ум. 240 г. х., 854/855) является самым ранним дошедшим до нас трудом по истории арабского халифата.

Новооткрытое историческое сочинение содержит много важных сообщений по истории Армении VII в., а также периода арабского владычества (701—862) в Армении. Рассказывая о первых походах арабов, автор сообщает интересные данные о битве при Иармуке, о командующем византийскими войсками армянине Вахане (Бахан), а также об армянине Мануиле, командовавшем византийским флотом при нападении на Алкесандрию в 645 г.

Весьма интересны и важны сообщения Ибн Хаййата о восстании 703 г. в Армении против халифата. Армения окончательно была завоевана арабами в 701 г., после чего была образована провинция Арминия (включавшая кроме Армении также Картли, Арран, прикаспийские области (Ширван) и Дарбанд). Но вскоре, вследствие жестокой политики халифата, вспыхнуло восстание

(703 г.) и, по сообщению автора, первый арабский правитель (остикан) Арминии был убит. Об убийстве правителя упоминают еще ал-Куфи (X в.) и Ибн ал-Асир (XIII в.), но некоторые подробности (как, например, имя правителя) переданы по-разному у армянских и арабских историков. Сведения Халифы ибн Хаййата помогают выяснению этих вопросов. Далее он рассказывает о нападении румов (ромеев, во главе с Смбагом Багратуни, патриkiem Арминии, находившимся в византийских владениях) в 705 г., и их поражении. Вслед за этим он упоминает о сожжении большой группы армянских нахараров (феодалов) в церквях армянских городов Нахчаван и Храм (Нашава и Басфурджан).

Этот год он называет «санат ал-харик» «год пожара» т. е. огня, сожжения, (выражение, которое мы находим лишь в XIV в. у ибн ал-Касира и в XV в. у Ибн Тагри Бирди, явно заимствовавшим его у Ибн Хаййата). Куфи же называет упомянутые церкви «сожженными» («мухтарика»).

При описании похода наместника северных провинций (Арминия, Джазира, Адарбайган) Марвана ибн Мухаммада против хазар (737 г.) автор упоминает о его нападении на царя лакзов (в области Дарбанд), которого Ибн ал-Асир называет Варнисом. У Ибн Хаййата он назван Вартанисом (предполагается, что это армянское имя Вртанес), в такой форме это имя передано также у Ибн Тагри Бирди. Ибн Хаййат сообщает и другие новые для нас сведения о военных действиях арабов против хазар.

В его сочинении интересны новые сведения о правителях Арминии, которые способствуют дополнению их списков.

Сообщения Ибн Хаййата важны для изучения политической истории халифата и отдельных провинций этого обширного государства. Они особенно важны для исследования арабо-византийских военных столкновений в Малой Азии. Автор отличается еще тем, что после изложения деятельности каждого халифа подробно упоминает все государственные должности и имена должностных лиц соответствующего периода.

Сочинением Ибн Хаййата пользовались Табари, Ибн ал-Асир и особенно Ибн Тагри Бирди, который несколько раз прямо ссылается на него, а также другие арабские историки. Его данные существенно уточняют и дополняют сведения арабских историков.

ՄԱՆՆԻՔԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Tarikh Khalifah ibn Khayyat, Beyrouth-Damas, 1977.

2 Արար պատմագրության պատմությանը նվիրված հայտնի աշխատություններն են. F. Wüstenfeld, Die Geschichtsschreiber der Araber und ihre Werke, Göttingen, 1882; C. Brockelmann. Geschichte der arabischen Litteratur, Bd. I—II, Weimar.

Berlin, 1898—1902: D. S. Margoliouth, Lectures on Arabic historians, Calcutta, 1930. H. A. R. Gibb, Muslim historiography, The Encyclopaedia of Islam, Supplement, Leiden-London, 1938, p. 233—245. F. Rosenthal, History of Muslim historiography, Leiden, 1952; J. de Somogyi, The development of Arabic historiography, Journal of Semitic Studies, v. III, 1958, 4, October, p. 373—387; F. Sezgin, Geschichte des arabischen Schrifttums, Bd. I, Leiden, 1967, S. 265—S. 237—389.

3 X. A. P. Гибб, Мусульманская историография, в кн. Арабская литература, М., 1960, с. 119—128.

4 Վահր (Ուահր) իրն Մունաբբիհ պարսկական ծագում ունեցող հրեա էր, որը հավանաբար մահմեդականացել էր: Ph. Hitti, History of the Arabs, London, 1958, p. 244. Sezgin, I, S. 305—307; Wahb ibn Munabbih, Kitab attijan fi muluk Himyar, ed. Krenkow, Haydarabad, 1347 (1928).

5 Brockelmann, I, S. 135. Սա հիմյարական (հին եմենական) ծագում ունեցող

6 Sezgin, I, S. 268—270. Նրա աշխատությունը հիմնված էր Հերաթի քրեատունական փաստաթղթերի և պարսկերենից թարգմանված նյութերի վրա:

7 Idem, S. 288—290. Նրա պապը՝ Յասարը գերի ընկած քրեատոնյա էր:

8 Brockelmann, I, S. 135—136.

9 History of Muhammeds campaigns by al-Wakidy, ed. by A. Kremer, Calcutta 1856.

10 Futuh al-Sham, al-Qahira, 1282 (1866): Futuh Mizr, Calcutta, 1277 (1860); Geschichte der Eroberung von Mesopotamien und Armenien, von el-Wakedl Hamburg, 1847.

11 Khalifa ibn Khayyat, preface A. D. al-Umarl, p. 19—20. Նա Միջագետքի հրեաներից էր:

12 Sezgin, I, S. 314—315.

13 Tarikh al-Tabari, v. VII, Le Caire, 1969, p. 510.

14 Khalifa (preface), p. 12 (n. 3).

15 Ibid, p. 11 (n. 6).

16 Ibn Khallikan, Wafayat al-Ayan, II, Beyrouth, 1969, p. 243—244.

17 Ibn Kathir, al-Bidaya w-al-nihaya, t. X, Beyrouth, 1981, p. 322.

18 Ibn Taghribirdy, al-Nudjum al-Zahira, I, al-Qahira, 1929, p. 181, 286.

19 F. Wüstenfeld, S. 19.

20 Khalifa (preface), p. 3—4.

21 The History of Khalifa ibn Khayyat, v. 1—2, ed. by Akram D. al-Umarl, 1967.

22 S. Zakkar, Ibn al-Khayyat al-Usfuri Khalifa, Enc. de l'Islam, Leyde-Paris, t. III, 1971, p. 862—863.

23 Khalifa (preface), p. 31—34.

24 Ibid, p. 19.

25 Ibid, p. 472.

26 Ibid, p. 23—30.

27 Այն կարծիքը, թե արաբները թվականով պատմադրությունը պարսկերենից են,

վերցրել (Н. П. Петрешевский, в кн. «История Ирана с древнейших времен до конца XVIII века», Л., 1958, стр 77), գուցե ճիշտ համարվեր մինչև Խալիֆա Իբն Խալլաթի սուլեյն երկի հայտնաբերվելը, քանի որ Ք դարի մյուս պատմիչները (Իբն Կուտայբա, Դինավարի, Բալազուրի, Ցակուրի) ըստ հիշրի տարիների չեն շարադրել իրենց աշխատությունները, թեև շարադրանքի մեջ օգտագործել են այն շինք Արդ ալ-Մալիք Խալիֆայի օրոք (695—705), երբ թղարկվեցին առաջին արաբական դրամները, դրանք թվական էին կրում։ Համենայն դեպս պարսկական ազդեցությունը արաբական պատմագրության վրա ընդունված փաստ է (С. Brockelmann, Geschichte der arabischen Litteratur, I, S. 134), որի դրսևորման վառ օրինակ է այն հանդամանքը, որ դեռ Ը դարի կեսերին պարսիկ Իբն ալ-Մուկաֆֆան (մեռ. 757 թ.) Թարգմանել էր արաբերենի պարսից արքայների տարեգրությունը՝ Խվաթալ Նամակը։ (Նրա պահլավերեն բնագրից հետագայում օգտվել է Ֆիրդուսին Շահնամեի հորինման համար)։

28 Khalifa, p. 49—51.

29 Ibid, p. 79.

30 Ibid, p. 130—131.

31 Թեոփանես Խոստովանոզ, Թարգմ. Հ. Բարթիկյանի, Բյուզանդական աղբյուրներ, Դ (Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 13), Երևան, 1983, էջ 46—47.

32 Liber expugnationis regionum auctore al-Beladsori, ed. M. I. de Goeje, Lugd. Bat., 1968, p. 135

33 Yaqubi, Tarikh, II, Beyrouth, 1960, p. 141.

34 Tarikh at-Tabari, Le Calre, III, 1960, p. 389, 391, 393—395, 435, 572.

35 Tabari, III, p. 570.

36 I. Goldziher, Muhammedanisches Studien, I, Halle, 1888, S. 147—216
История Ирана, с. 77.

37 Khalifa, p. 133.

38 Dinawary, al-Akhbar al-Tiwal, Beyrouth, p. 127.

39 Beladsori, p. 244.

40 Khalifa, p. 158.

41 Beladsori, p. 221.

42 Թեոփանես, էջ 47.

43 Khalifa, p. 228.

44 Tabari, V, 1971, p. 330.

45 Khalifa, p. 263.

46 Ibid, p. 299.

47 Ph. Hitti, History of the Arabs, p. 195.

48 Иоанн Дамаскин, Сов. ист. энци., 6, М., 1965, с. 171.

49 Tabari, V, p. 330.

50 703-ի ապստամբության մասին տես՝ Մ. Չամչյան, Պատմութիւն Հայոց, Վեհապետի, Բ, 1785, էջ 376—382. М. St Martin, Mémoires historiques et géographiques sur l'Arménie, I, Paris, 1318, p. 340—341. М. Chazarian, Armenien unter der Arabischen Herrschaft, Marburg, 1903, S. 44—46. Մ. Օրմանեան, Ազգապատում, Ա, Պեյրուս, 1959, էջ 779—787. J. Laurent, L'Arménie entre Byzance

et l'Islam, Lisbonne, 1980, p. 215, 243—245. Բ. Առաքելյան, Հայերի ապստամբութիւնը արաբական լծի դեմ 703 թ., ՀՍՍՀ ԳԱ Տեղեկագիր (հաս. գիտ.), 1941, 5—6, էջ 65—62: Ա. Տեր-Ղևոնդյան, 703 թվականի ապստամբութիւնը Հայաստանում խալիֆայութեան դեմ, Պատմա-բանասիրական հանդես, 1932, 3, էջ 33—46:

51 Khalifa, p. 288.

52 Իրն ալ-Ասիր, թարգմ. Ա. Տեր-Ղևոնդյանի, Արաբական աղբյուրներ, Բ (Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 11, Երևան, 1981, էջ 65): (Այսուհետև՝ Իրն ալ-Ասիր):

53 Khalifa, p. 289.

54 Պատմութիւն Ղևոնդեայ մեծի վարդապետի Հայոց, աշխ. Ս. Մալխասեանց, Ս. Պետրոբուրգ, 1887, էջ 23: (Այսուհետև՝ Ղևոնդ):

55 Պատմութիւն Յովհաննու կաթողիկոսի, Երուսաղեմ, 1867, էջ 121.

56 Kufi, Kitab al-futuh, VI. Hyderabad, 1972, p. 294.

57 Ղևոնդ, էջ 24—25:

58 Հ. Նալբանդյան, Արաբացի ոստիկանները Հայաստանում, ՀՍՍՀ ԳԱ Տեղեկագիր (հաս. գիտ.), 1956, № 8, էջ 107:

59 Beladsori, p. 205.

60 Yaqubi, II, P. 272.

61 Ղևոնդ, էջ 31:

62 Khalifa, p. 291.

63 Իրն ալ-Ասիր, էջ 66:

64 Khalifa, p. 290.

65 Ղևոնդ, էջ 32:

66 Kufi, VI, p. 294.

67 Khalifa, p. 290.

68 Ղևոնդ, էջ 33—34, Հովհաննես (Դրասխանակերտցի), էջ 124—125:

69 Beladsori, p. 205.

70 Yaqubi, II, p. 272.

71 Ibn Kathir, IX, 198, p. 52. Լեո, Հայոց պատմութիւն, Բ (Երկեր, 2), Երևան, 1967, էջ 375: Ղ. Ալիշան, Յուշիկը հայրենեաց հայոց, Վենետիկ, 1880, Ա, էջ 147:

72 Ibn Taghribirdy, I, 207.

73 Kufi, VI, p. 295.

74 Khalifa, p. 348—349.

75 Beladsori, p. 208—209.

76 Իրն ալ-Ասիր, էջ 86—88:

77 Ibn Taghribirdy, I, 279.

78 Yaqubi, II, p. 318.

79 Tabari, VII, p. 160.

80 М. И. Артамонов, История хазар, Л., 1962, с. 226—230.

81 Khalifa, p. 348—349.

82 Իրն ալ-Ասիր, էջ 86: Մ. Արամոնովը վկայակոչելով Բ. Դորնի (Дорн, Известия о хазарах восточного историка Табари, Журн. мин. нар. просв., 1844,

ч. XIII, № 7, 8, с. 91—92) մեջ բերած տեղեկությունը, գտնում է, որ իրեն ալ-Ասիրի հիշած Վարնիսը լաթդի թագավոր Օպասն է (Артамонов, История хазар, с. 231):

83 Ibn Taghribirdy, I, p. 279.

84 Т. М. Сипенкова, «История» Халифы ибн Хаййата, как источник по истории арабских завоеваний на Кавказе и в Закавказье. «Историография и источниковедение истории стран Азии и Африки», V, Л., 1980, с. 80 (էջ 76—80)։ Արաբ աշխարհագրագետ Յակուբը (ՅԳ Գ.) Ուարդանիսը համարում է բերդ, Սամսատի կողմերում (Yaqut, Mudjam al-Buldan, Beyrouth, 1977, V, p. 370)։ Հ. Նալբանդյանը այն նույնացնում է Վարդանիքի հետ, Ակնի կողմերում (Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, Երևան, 1965, էջ 210)։

85 Ս. Բաբխուդադյան, Դերբենդի հայ-աղվանական թագավորությունը, ՊԲՀ, 1969, № 3, էջ 125—147։

86 Khalifa, p. 411.

87 Chronique de Denys de Teil-Mahré, Paris, 1895, p. 56.

88 Beladsori, p. 199.

89 Հիշամ խալիֆայի օրոք (724—743) հիշվում է առաջապահ զորքի (շուրթա) հրամանատար Քաթար իրն Համիդ ալ-Աբսին (Khalifa, p. 361), որը հետագայում նշանակվել է Արմինիայի կառավարիչ։ Օմայան վերջին խալիֆա Մուսան Բ-ի օրոք (744—750) Արմինիայի կառավարիչ է նշանակվում ոմն Աբդալլահ իրն Մուսլիմ, որը շուտով մեռնում է (Khalifa, p. 407)։

90 Гибб, Арабская литература, с. 128—131. Հիշյալ շորս պատմիչներից երեքը (Իրն Կուտայրա, Դինավարի, Բալազուրի) պարսիկ են։